առաքելական աթոռոյս տէր Անդրէաս, և ետ գաղափարել զսա Մատթէոս անարժան կրօնաւորի, փանաքի և սղալամիտ գրչի ի մէջ Աշխարհամատրան եկեղեցւոյն ղէմ յանդիման գերեզմանին Բս.ի Այ. մերոյ։ Ի թուաչափ քանակութեան համարոյ յեղանակսն չրջանական հոլովման մեծի արուսեկի. որ ըստ ընթացման ժամանակի այսմիկ նկատի քսաներորդ որելինի, որ է Ռ. երրորդ ամի յաբեթական տումարին։ Արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք զմատեանս զայս, կամ գաղափարէք և կամ հանդիպիք սմա, յիշեսջիք աղօթիւք զստացուղ սբ. և աստուածազարդ մատենին զյառաջասացեալն զտէր Անդրէաս հայրն մեր և զիւր հօրեղբայրն զառաքելաշնորհ զտէր Աստուածատուր Արհի եպիսկոպոսն սբ. Աթոռոյս...» (Խաչ. Ցուց. էջ 682)։

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԲԱՐԻԱԶԵՆՑ, ԱԿՆՑԻ.—Մբ. ՏՓ. 1788ին. 1791ին ընդօրինակած է և յիշատակ տուած է Ս. Յակոբի վանքին Մեկն. Եապիայ Մարգարէին գիրքը (ՄՋ. Թ. 367). ինչպէս նաև Գր. Տաթեւացիին Քաղուածոյ մեկն. Սաղմոսացը ՌՄԼԴ (= 1785) թուին. եւ թափորի տեսրակ մը եւս ՌՄԽԷ (=1808)ին, եւ անոնց յիշատակարաններուն մէջ կ'անուանէ զինքը առեղծու Ս. Փրկչին։

Մատթէոս վրդ. իր տեսչութեան օրով, ՌՄԽԴ (=1794)ին Ս. Փրկչի եկեղեցին չինիով զարդարած է եւ դրած է յիշատակարան մը նոյն եկեղեցիին հարաւային պատին վրայ. այդ յիշատակարանը կը դնենք հոս նոյնութեամբ. «Աստուածային ողորմութեամբն փրկչին մերոյ ի թուականի եւս մերոյ ՌՄԽԴ (= 1794) ամին ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյս Եւդոկիացի տեառն Պետրոսի սրբազան պատրիարքի, եւ ես յԱկնայ գիւղէն Զէրէզցի տէր Մատթէոս մեղսամած աբեղայն սուրբ վանուցս աւելածու Աստուծոյ զօրութեամբն բաղում անօթս եկեղեցւոյս յաւելի յիտոյ յաջողութեամբն ամենազօրին բոլոր եկեղեցին չինապատ զարդարեցի և վայելողք Աստուած ողորմեսիւ յիշեցէք... ամէն.»։

Մատթէոս վրդ. վարած է նաեւ Ս. Գերեզմանին ղուսահանութեան պաշտօնը և վախճանած է 1815 ին։

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ.— 1834 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։